Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Մագիստրատուրա, առկա ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Ա. Հովհաննիսյան ի.գ.թ., դոցենտ E-mail: arobh@mail.ru, հեռ 093-00-07-62
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	2-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	Մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ	«Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 28 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 58 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը մեկ անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ քրեական դատավարության իրավունք», «Օպերատիվ-հետախուզական գործունեություն» բակալավրիական դասընթացների և «Օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մագիստրոսական դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են Հայաստանի Հանրապետությունում մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման ոլորտի տեսական և գործնական հիմնահարցերը, իրավական կարգավորման վիճակի, զարգացման հեռանկարային ուղղությունների:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ Հայաստանի Հանրապետությունում մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման ոլորտի տեսական և գործնական հիմնահարցերի, իրավական կարգավորման վիճակի, քրեադատավարական ապացուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրների զարգացման հեռանկարային ուղղությունների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել ՀՀ-ում մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման ոլորտի տեսական և գործնական հիմնահարցերի, իրավական կարգավորման վիճակի, զարգացման հեռանկարային ուղղությունները, 2) ներկայացնել մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման՝ որպես օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպամարտավարական ինքնուրույն ձևի էության և հատկանիշները, 3) ներկայացնել օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցության էության և նշանակությունը, 4) ներկայացնել մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման հիմնախնդիրները, 5) ներկայացնել քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները, 6) ներկայացնել քրեադատավարական ապացուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները, 7) ներկայացնել քննչական գործողությունների անցկացման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) բացատրել և կառուցավորել մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման՝ որպես օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպամարտավարական ինքնուրույն ձևի էությունը և հատկանիշները, 2) բացատրել օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցության էությունը և գնահատել դրա նշանակությունը, 3) հետազոտել մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման հիմնախնդիրները և դրանց լուծումներ առաջարկել, 4) հետազոտել քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները և դրանց լուծումներ առաջարկել, 5) հետազոտել քրեադատավարական ապացուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները և դրանց լուծումներ առաջարկել, 6) հետազոտել քննչական գործողությունների անցկացման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները և դրանց լուծումներ առաջարկել:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		<u>Նորմատիվ իրավական ակտեր.</u> 1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թ. խմբ.):

		2) ՀՀ Նախագահի՝ «Ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագիրը (2007 թ.): 3) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (1998 թ.): 4) Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (2000 թ.): 5) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (2003 թ.): 6) «Դատախազության մասին» ՀՀ օրենք (1998 թ.): 7) «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք (2001 թ.): 8) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք (2002 թ.): 9) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք (2007 թ.): 10) ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-871 որոշումը (2010 թ.): 11) ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-926 որոշումը (2010 թ.): 12) <u>Տեսական աղբյուրներ</u> 1. *Бодренков В.А.* Проблемы оперативно-розыскного обеспечения предупреждения совершения преступлений: монография / под. ред. В.К. Зникина, А.Г. Халиулина, А.Ю. Шумилова. – М.: изд. дом И.И. Шумиловой, 2009. 2. *Доля Е.А.* Формирование доказательств на основе результатов оперативно-розыскной деятельности: монография. – М.: Проспект, 2009. 3. *Зажицкий В.И.* Результаты оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: теория и практика. – СПб.: Юридический центр Пресс, 2006. 4. Теория и практика использования результатов оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве: Материалы международной научно-практ. конференции / Под ред. К.К. Горяинова. – М. 2002. 5. *Громов Н.А., Пономаренко В.А., Гущин А.Н., Францифоров Ю.В.* Доказательства, доказывание и использование результатов оперативно-розыскной деятельности: учеб. пособие. – М.: Приор, 2001.
Լրացուցիչ		1. Атмажитов В.М. О сущности оперативно-розыскной деятельности: Труды /Академия управления МВД России. М., 2008. № 1 (5). С. 66 – 70. 2. Атмажитов В.М., Бобров В.Г. Оперативно-розыскные мероприятия: Актуальные вопросы теории и практики // Государство и право. 2005. № 3. С. 23 – 31. 3. Ахкубеков А.О. 4. Афанасьев В.Г. Общество: системность, познание и управление. -М., 1981. 5. Вагин О.А. О концепции совершенствования оперативно-розыскного закона // Оперативник (сыщик), 2005. № 3 (4). С. 7 – 8. 6. Водько Н.П. Некоторые направления совершенствования оперативно-розыскного законодательства // О совершенствовании правового регулирования оперативно-розыскной деятельности правоохранительных органов и специальных служб Российской Федерации: материалы семинара (Москва, 24 марта 2005 г.). – М., 2005. С. 179 – 186. 7. Водько Н.П. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности» в системе Российского законодательства: проблемы и решения: монография. – М.: изд. дом И.И. Шумиловой, 2007. – 131 с. 8. Гаврилов А.К. Развитие института взаимодействия следователя и оперативных аппаратов. - Волгоград, 1974. 9. Демидов И. Оперативно-розыскная деятельность и уголовный процесс // Законность, 1993. № 8. С. 33. 10. Железняк Н.С. «Черные дыры» и «белые пятна» в законодательном определении понятия и задач оперативно-розыскной деятельности // Оперативник (сыщик), 2005. № 2 (3). С. 10 – 13.

11. Зуйков Г.Г. Распределение компетенции в деятельности по раскрытию преступлений // Совершенствование управления раскрытием и расследованием преступлений.- М., 1981.
12. Иванов А. Н. Организация и тактика оперативно-розыскного контроля за поведением подозреваемых и обвиняемых в период расследования хищений социалистического имущества. - М., 1988.
13. Каган М.С. Система и структура. Системные исследования: Методологические проблемы. Ежегодник.- М., 1983.
14. Кривенко А.И. Взаимодействие следователя и оперативных подразделений при выявлении, раскрытии и расследовании преступлений. – М.: Инфра-М, 2003. – 139 с.
15. Лузгин И.М. Расследование как процесс познания. -М., 1969.
16. Миньковский Г.М. и др. Проблемы советской уголовной политики.- Владивосток, 1985.
17. Нагиленко Б.Я. О понятии результата оперативно-розыскной деятельности // Оперативник (сыщик), 2006. № 4 (9). С. 21 – 26.
18. Петрухин М.Л., Батуров Г.П., Моршакова Т.Г. Теоретические основы эффективности правосудия.- М., 1979.
19. Похмелкин А. Идеология, рынок, уголовная политика.// Социалистическая законность. 1991.
20. Проблемы теории и практики оперативно-розыскной деятельности: Материалы научно-практ. конференции / Под ред. К.К. Горяинова, И.А. Климова. – М.: ВНИИ МВД России, 2002.
21. Синилов Г.К. О некоторых итогах развития теории оперативно-розыскной деятельности за последние 15 лет (1990 – 2005 гг.) и ее актуальных проблемах на ближайшую перспективу // Оперативник (сыщик), 2005. № 3. С. 9 – 18.
22. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности»: Научно-практ. коммент. / под. ред. В.В. Николюка и В.В. Кальницкого. – Омск.: Омский юридический институт МВД России, 1996. – 397 с.
23. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности»: научно-практ. коммент. / под ред. А.Е. Чечетина. 10-е изд., перераб. и доп. – Барнаул.: БЮИ МВД России, 2005. – 224 с.
24. Хомколов В.П. Проблемы организации и тактики взаимодействия следователя и оперативных аппаратов при раскрытии и расследовании преступлений // Совершенствование оперативно-розыскной деятельности в современных условиях. - Омск, 1989.
25. Чувилев А.А. Оперативно-розыскное право: монография. – М.: НОРМА-ИНФРА, 1999. – 80 с.
26. Энциклопедия МВД России / гл. редактор: В.Ф. Некрасов. – М.: ОЛМА-ПРЕСС; Объединенная редакция МВД России, 2002. – 623 с.
27. Вагин О.А. и др. Оперативно-розыскные мероприятия и использование их результатов: Учебное пособие/О.А.Вагин и др.- М., 2006.
28. Вагин О.А., Гаврилов Г.Я., Горяинов К.К. и др. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М.: Норма, 2006. – 447 с.
29. Вагин О.А., Исиченко А.П., Чечетин А.Е. Постатейный комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности». – М.: Деловой двор, 2009. – 328 с.
30. Вагин О.А., Исиченко А.П. Постатейный комментарий к ФЗ «Об оперативно-розыскной деятельности». – М.: Экзамен, 2006. – 479 с.
31. Гапанович Н.Н., Мартинович И.И. Основы взаимодействия следователя и органа дознания при расследовании преступлений: Учеб. пособие. - Минск, 1983.
32. Гармаев Ю.П. Использование результатов ОРД при расследовании

уголовных дел: Практическое пособие / Ю.П.Гармаев. – М., 2005.
33. Горяинов К.К., Кваша Ю.Ф., Сурков К.В. Федеральный закон «Об оперативно-розыскной деятельности». Комментарий / под ред. П.Г. Пономарева. – М.: Новый юрист, 1997. – 570 с.
34. Гуткин И.М. Правовые вопросы взаимодействия следователей и органов дознания в советском уголовном процессе. - М., 1967.
35. Дубинский А.Я., Шостак Ю.И. Организация и деятельность следственно-оперативной группы.- Киев, 1981.
36. Зникин В.К. Оперативно-розыскная деятельность как система добывания и собирания уголовно-процессуальных доказательств: учеб. пособие. – Кемерово.: Кемеровский гос. университет, 2000. – 148 с.
37. Киселев А.П. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности»: Постатейный. – М.: Ось-89, 2007. – 222 с.
38. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности» / отв. ред. А.Ю. Шумилов. – М.: Вердикт-1 М, 1997. – 208 с.
39. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации: науч.-практическое издание / Под общ. ред. В.В. Мозякова, С.И. Гирько, Г.В. Мальцева, И.Н. Барцица. – М., 2003.
40. Кореневский Ю.В., Токарева М.Е. Использование результатов оперативно-розыскной деятельности в доказывании по уголовным делам: метод. пособие. – М.: Юрлитинформ, 2000. – 144 с.
41. Маршунов М.Н. Федеральный закон об оперативно-розыскной деятельности в схемах и таблицах: Постатейный комментарий. – М.; СПб.: Герда, 1998. – 349 с.
42. Оперативно-розыскная деятельность: учебник / под ред. К.К. Горяинова, В.С. Овчинского, А.Ю. Шумилова. – М.: Инфра-М, 2001. – 794 с.
43. Оперативно-розыскная деятельность: учебник / под ред. К.К. Горяинова, В.С. Овчинского, Г.К. Синилова, А.Ю. Шумилова. – М.: Инфра-М, 2004. – 848 с.
44. **Оперативно-розыскная энциклопедия / авт. сост. А.Ю. Шумилов. – М.: изд-во И.И. Шумиловой, 2004. – 364 с.**
45. Осипов А.Ф. Вопросы соотношения процессуальной и оперативно-розыскной деятельности. Взаимодействие следователя с органами дознания.- М., 1976.
46. Смирнов М.П. Законодательное регулирование оперативно-розыскной деятельности в Российской Федерации и за рубежом: учеб. пособие. В 2 ч. Ч. 1. 4-е изд., расшир. и перераб. – М.: Московский новый юрид. институт; Интеллект-Центр, 2010. – 448 с.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը քննություն		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	
		18-20	գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր
		13-17	լավ	
		8-12	բավարար	
		0-7	անբավարար	
		0	չներկայացած	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ /		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:		

ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 **Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցումը որպես ՕՀԳ կազմակերպամարտավարական ինքնուրույն ձև** **(4 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) ՕՀԳ կազմակերպամարտավարական ձևերը, դրանց նշանակությունը: 2) Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հատկանիշները, նրա տարբերությունը օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպամարտավարական այլ ձևերից: 3) Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հասկացությունը, դրան ներկայացվող պահանջները: 4) Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման ընթացքում օպերատիվ ստորաբաժանումների կողմից լուծվող խնդիրները:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 2 **Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցությունը** **(6 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցության բնութագրական գծերը և հատկանիշները: 2) Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցության իրավական, պատմական ու գիտական հիմքերը 3) Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների նշանակությունը քրեական դատավարության համար:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 3 **Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման հիմնախնդիրները** **(6 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման նշանակությունը: 2) Նախաքննությունը և օպերատիվ-հետախուզական գործունեությունը որպես քրեական արդարադատության համակարգի տարրեր, այդ համակարգի ներսում դրանց գործառնության հիմնախնդիրը: 3) Նախաքննության և օպերատիվ-հետախուզական աշխատանքի միաձուլման արդյունքում ստեղծված ենթահամակարգի տարրերի հիերարխիայի հիմնախնդիրը: 4) Քննիչի և օպերատիվ աշխատակցի համագործակցության հիմնախնդիրները, դրանց լուծման տարբերակները: 5) Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման համար օպերատիվ նշանակություն ունեցող հանգամանքները: Օպերատիվ տվյալների իրացման փուլում քննիչի և օպերատիվ աշխատակցի համատեղ մասնակցությունը: 6) Օպերատիվ-հետախուզական վերահսկողության էությունը և	Հարցեր 1-6 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք:

տարրերը:	

Թեմա 4 **Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) «Քրեական գործի հարուցման առիթ» և «քրեական գործի հարուցման հիմք» հասկացությունների սահմանման հիմնահարցը քրեական դատավարությունում, դրանց հարաբերակցությունը: Օպերատիվ տեղեկատվությունը որպես քրեական գործի հարուցման առիթ և հիմք: 2) Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հասկացությունը, էությունը և նշանակությունը: 3) Նախնական օպերատիվ տեղեկատվության ստուգման հնարքներն ու մեթոդները: 4) Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման համար օպերատիվ տեղեկությունների փոխանցումը նախաքննության մարմին:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-4 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-4 ինքնուրույն աշխատանք:

Թեմա 5 **Քրեադատավարական ապացուցման և քննչական գործողությունների օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1) Ապացույցի և ապացուցման հասկացությունը քրեական դատավարությունում: 2) Օպերատիվ-հետախուզական ճանաչման և քրեադատավարական ապացուցման հարաբերակցությունը: 3) Քրեական գործերով ապացուցման ընթացքում օգտագործվող օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներին ներկայացվող պահանջները: 4) Ապացույցների հավաքման և քննչական գործողությունների անցկացման գործընթացում օպերատիվ-հետախուզական գործունեության մեթոդների ու միջոցների օգտագործման պայմանները: Քննչական գործողության հավանական օբյեկտի կամ վայրի պարզումը: 5) Օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը որպես «այլ փաստաթղթեր»: Օպերատիվ-հետախուզական ճանապարհով հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի օգտագործումը որպես իրեղեն ապացույցներ: 6) Ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման նոր մոդելը (ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի):	Հարցեր 1-6 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա: Հարցեր 1-6 սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում: Հարցեր 1-6 ինքնուրույն աշխատանք:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»
դասընթացի ամփոփիչ քննության

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպամարտավարական ձևերը: Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հասկացությունը:
2. Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցության բնութագրական գծերը:
3. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման նշանակությունը:
4. Նախաքննության և օպերատիվ-հետախուզական աշխատանքի միաձուլման արդյունքում ստեղծված ենթահամակարգի տարրերի հիերարխիայի հիմնախնդիրը:
5. Քննիչի և օպերատիվ աշխատակցի միջև համագործակցությունը որպես ենթահամակարգային տարրերի փոխազդեցության առանցքային հարաբերություն, այդ համագործակցության հիմնախնդիրները, դրանց լուծման տարբերակները:
6. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման ընթացքում օպերատիվ ստորաբաժանումների կողմից լուծվող խնդիրները:
7. Քրեական դատավարության և օպերատիվ-հետախուզական գործունեության հարաբերակցության իրավական, պատմական ու գիտական հիմքերը:
8. Օպերատիվ-հետախուզական վերահսկողության էությունը և տարրերը:
9. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման հատկանիշները, նրա տարբերությունը օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպամարտավարական այլ ձևերից:
10. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների նշանակությունը քրեական դատավարության համար:
11. Քրեական դատավարությունը և օպերատիվ-հետախուզական գործունեությունը որպես քրեական արդարադատության համակարգի տարրեր, այդ համակարգի ներսում դրանց համագործակցության սոցիալական պայմանավորվածությունը:
12. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման կազմակերպման համար օպերատիվ նշանակություն ունեցող հանգամանքները: Դատավարական ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական աշխատանքի ապահովող դերը: Օպերատիվ տվյալների իրացման փուլում քննիչի և օպերատիվ աշխատակցի համատեղ մասնակցությունը:
13. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման շրջանակներում նախաքննության և օպերատիվ-հետախուզական աշխատանքի գործառնության ռեժիմները:
14. Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական դատավարության հարաբերակցության հատկանիշները:
15. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցմանը ներկայացվող պահանջները:
16. Մինչդատական վարույթի օպերատիվ-հետախուզական ուղեկցման աշխատանքների կազմակերպումը, օպերատիվ տակտիկայի կառուցման համար նշանակություն ունեցող հանգամանքները, քննչական գործողությունների ապահովման ուղղությունները:
17. «Քրեական գործի հարուցման առիթ» և «քրեական գործի հարուցման հիմք» հասկացությունների սահմանման հիմնահարցը քրեական դատավարությունում, դրանց հարաբերակցությունը: Օպերատիվ տեղեկատվությունը որպես քրեական գործի հարուցման առիթ և հիմք:
18. Ապացույցի և ապացուցման հասկացությունը քրեական դատավարությունում:
19. Օպերատիվ նախնական տեղեկատվության ստուգման խորությունը, հանցագործության հատկանիշները մատնանշող անհրաժեշտ և բավարար տեղեկությունները:
20. Օպերատիվ-ծառայողական փաստաթղթերը որպես «այլ փաստաթղթեր»: Օպերատիվ-հետախուզական ճանապարհով հայտնաբերված առարկաների և փաստաթղթերի օգտագործումը որպես իրեղեն ապացույցներ:

21. Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման օպերատիվ-հետախուզական ուղեկցման հասկացությունը, էությունը և նշանակությունը:
22. Օպերատիվ-հետախուզական ճանաչման և քրեադատավարական ապացուցման հարաբերակցությունը:
23. Տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերի կամ այդ գործերով քրեական հետապնդման հարուցման համար հավաքվող օպերատիվ տեղեկատվության բովանդակային առանձնահատկությունները:
24. Ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման քրեադատավարական (իրավական) կարգավորումը:
25. Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման համար քննիչին օպերատիվ տեղեկությունների փոխանցման առավել նպատակահարմար պահի որոշումը:
26. Քրեական գործերով ապացուցման ընթացքում օգտագործվող օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներին ներկայացվող պահանջները:
27. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների հասկացության սահմանումը:
28. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները որպես քննչական գործողությունների անցկացման փաստական տեղեկատվական հիմք:
29. Քրեական գործի և քրեական հետապնդման հարուցման համար քննիչին կազմակերպված հանցավոր խմբերի գործունեության օպերատիվ տեղեկությունների և նյութերի փոխանցման յուրահատկությունները:
30. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը քննչական գործողության անցկացման մասին որոշման կայացման փուլում:
31. Ապացուցման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման նոր մոդելը (ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի):
32. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը քննչական գործողությունների մարտավարությունը որոշելիս: